ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.08.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/65

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

«ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 29.07.2020թ.)

Արգավանդ համայնքի ղեկավար՝ Ա. Աղաջանյանի

Արգավանդի համայնքապետարանի ներկայացուցիչ՝

Ն. Հակոբյանի (լիազորագիր տրված՝ 03.08.2020թ.),

քննելով Արգավանդի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի համայնքի արևային կայանի տեղադրման և փողոցների լուսավորության անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից 28.07.2020թ. ներկայացված (29.07.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/65 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 28.07.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արգավանդի համայնքապետարանի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի համայնքի արևային կայանի տեղադրման և փողոցների լուսավորության անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2020թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝

4-րդ կետի համաձայն՝ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում բացակայում է հայտերի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը:

5.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4-րդ կետում սահմանված թերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2020թ. ժամը 17:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝

4.1 կետի համաձայն՝ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

4.2 կետի համաձայն՝ հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը:

4.3 կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 5 աշխատանքային օր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2020թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության՝

1-ին կետի համաձայն՝ ուսումնասիրվել է «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված ծավալաթերթերը: Ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ երկու կազմակերպության ծավալաթերթերի ընդհանուր արժեքները համապատասխանում են իրենց ներկայացված գնային առաջարկներին, սակայն ծավալաթերթերում առկա են թվաբանական տեխնիկական սխալներ՝ կապված բազմապատկման հետ:

2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր ժամանակ՝ այդ տեխնիկական անհամապատասխանությունները շտկելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2020թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության՝

1-ին կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթ նշված ժամկետում չի ներկայացվել, իսկ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամկետում ուղարկվել է անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթը, որը ուսումնասիրվել է գնահատող հանձնաժողովի նիստին ներկա մասնակիցների կողմից: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից այդ անհամապատասխանությունները շտկվել են:

Այնուհետև, www.gnumner.am համացանցային կայքում 24.07.2020թ. ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն, հետևյալ բովանդակությամբ.

Չափաբաժին 1: Գնման առարկա է հանդիսանում երեք հակակարկտային կայանների ձեռքբերումը:

/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել “X”/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
	<<ՍՄԱՐԹ ԷՆԵՐՋԻ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ>> ՍՊԸ	X		
	<<ՍՈԼԱՐ ՀՈՄ	X		

	ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ> ՍՊԸ			

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ/**
1	<<ՍՄԱՐԹ ԷՆԵՐՋԻ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ>> ՍՊԸ	X	18508.5

<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի՝

8.2 կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:...Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

8.3 կետի համաձայն՝ Ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

8.6 կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ...

8.7 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

8.8 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

8.10 կետի համաձայն՝ հայտերը բացվելուց և գնահատվելուց հետո հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ

որում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.21 կետի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

8.22 կետի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Նախ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2020թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4-րդ կետում սահմանված թերությունները (այն է՝ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում բացակայում է հայտերի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը):

Այսինքն գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետով, հայտերի բացման և գնահատման նիստի ժամանակ, կասեցրել է նիստը և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տվել է կատարել համապատասխան շտկում:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2020թ. ժամը 17:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, և նույն արձանագրության 4.3 կետով սահմանվել է,

որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 5 աշխատանքային օր:

Որից հետո, 21.07.2020թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին կրկին Կարգի 41-րդ կետի համաձայն, տվել է շտկում կատարելու հնարավորություն:

Մասնավորապես, հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված ծավալաթերթերի ընդհանուր արժեքները համապատասխանում են իրենց ներկայացված գնային առաջարկներին, սակայն ծավալաթերթերում առկա են թվաբանական տեխնիկական սխալներ կապված բազմապատկման հետ: Ընդ որում, «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի ծավալաթերում նշված թվաբանական սխալների մասին գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային եղանակով հայտնել է «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն (էլեկտրոնային նամակը կցվում է):

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր ժամանակ այդ տեխնիկական անհամապատասխանությունները շտկելու համար:

Իսկ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2020թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթ նշված ժամկետում չի ներկայացվել, իսկ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամկետում ուղարկվել է անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթը:

Որից հետո www.gnumner.am համացանցային կայքում 24.07.2020թ. ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն, որտեղ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ»

ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը նշված են որպես Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր:

Նման փաստական հանգամանքների պայմաններում ակնհայտ է, որ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված մի շարք դրույթներ, մասնավորապես՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 41-րդ կետի, Հրավերի 8.2-8.3, 8.6-8.8, 8.10, 8.21 և 8.22 կետերով սահմանված դրույթները:

Այսպիսով ունենք իրավիճակ, որում ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել մի շարք խախտումներ, մասնավորապես.

Գնահատող հանձնաժողովը թիվ 2 արձանագրության 5.1 կետով արդեն իսկ կիրառել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը և շտկում կատարելու հնարավորություն է տվել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին (այն է՝ Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հայտերի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը): Իսկ այնուհետև 21.07.2020թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հանդեպ կրկին կիրառել է Կարգի 41-րդ կետը և կրկին շտկում կատարելու հնարավորություն է տրամարդրել նույն «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին՝ ծավալաթերթում արձանագրելով թվաբանական տեխնիկական սխալներ: Ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը իրավունք ուներ Կարգի 41-րդ կետը կիրառել միայն մեկ անգամ, այն էլ հայտերի բացման և գնահատման փուլում, ինչը արդեն իսկ կատարվել էր: Ուստի երկրորդ անգամ շտկում պահանջելով՝ գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը:

Գնահատող հանձնաժողովը, 20.07.2020թ. ժամը 17:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, և նույն արձանագրության 4.3 կետով սահմանվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 5 աշխատանքային օր: Սակայն հաջորդ՝ թիվ 4 արձանագրությամբ, գնահատող հանձնաժողովը առանց թիվ 3 արձանագրության 4.1 և 4.3. կետերով կայացրած որոշումները դադարեցնելու, այսինքն առանց պայմանագիր կնքելու մասին որոշումը

դադարեցնելու, նորից հետ է եկել գնահատման փուլ և կիրառել Կարգի 41-րդ կետի պահանջները: Վերոհիշյալի արդյունքում խախտվել է ընթացակարգի ողջ տրամաբանությունը, ողջ բնականոն ընթացքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2020թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթ նշված ժամկետում չի ներկայացվել: Սակայն www.gnumner.am համացանցային կայքում 24.07.2020թ. ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը, որտեղ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը նշված է որպես Հրավերի պահանջներին համապատասխանող հայտ: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ իրականում «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ծավալաթերթում առկա չի եղել թվաբանական սխալ (եղել է կլորացում տասնորդական թվում), և այդ պատճառով գնահատող հանձնաժողովը սկզբից արձանագրելով, որ ՍՊԸ-ն անհամապատասխանությունները նշված ժամկետում չի ներկայացրել, այնուհետև առանց այդ որոշման դադարեցման, պայմանագիր կնքելու մասին որոշման մեջ նշել է, որ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի պահանջներին: Վերոհիշյալի արդյունքում խախտվել է ընթացակարգի ողջ տրամաբանությունը, ողջ բնականոն ընթացքը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել՝

1.ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.08.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը խնդրել է, որպիսի Պատվիրատուն հստակեցնի ի վերջո «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, թե՝ ոչ, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից շտկված ծավալաթերթ նշված ժամկետում չի ներկայացվել, մինչդեռ www.gnumner.am համացանցային կայքում 24.07.2020թ. ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը, որտեղ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը նշված է որպես Հրավերի պահանջներին համապատասխանող հայտ:

2. <u>Արգավանդի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

Արգավանդի համայանքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.08.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, համայնքի ղեկավարն ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը և վերջինս հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատելիս չի նկատել, որ երկու Ընկերությունների ծավալաթերթ նախահաշիվներում առկա են թվաբանական սխալներ, սակայն «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ստանալով գրություն՝ ուսումնասիրվել է «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ

ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվները և արձանագրվել է թվաբանական (բազմապատկման) սխալներ, այնուհետև որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ծանուցել Ընկերություններին առկա տեխնիկական սխալները շտկելու համար: Վերջիններս ներկայացրել են սահմանված ժամկետում, սակայն կրկին արձանագրվել է թվաբանական սխալներ:

Ի պատասխան Ընկերության այն հարցադրմանը՝ արդյոք «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, թե՝ ոչ Պատվիրատուն հայտնել է, որ համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության՝ վերջինիս հայտը մերժված չէ:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Արգավանդի համայնքապետարանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի համայնքի արևային կայանի տեղադրման և փողոցների լուսավորության անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում բացակայում է հայտերի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը:

3. Նույն արձանագրության 5.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4-րդ կետում սահմանված թերությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի

և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5. Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, այնուհետև 4.2 կետի համաձայն՝ որոշվել է հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը, իսկ 4.3 կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 5 աշխատանքային օր:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ուղարկված էլեկտրոնային նամակը հանձնաժողովը անցկացրեց արտահերթ նիստ, որի ժամանակ ուսումնասիրվեցին «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված ծավալաթերթերը, որոնց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ երկու կազմակերպության ծավալաթերթերի ընդհանուր արժեքները համապատասխանում են իրենց ներկայացված գնային առաջարկներին, սակայն ծավալաթերթերում առկա են թվաբանական տեխնիկական սխալներ՝ կապված բազմապատկման հետ: Միաժամանակ արձանագրվել է, որ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից նշված «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի ծավալաթերթում գնային առաջարկի շեղումներ չի հայտնաբերվել:

7. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր ժամանակ՝ այդ տեխնիկական անհամապատասխանությունները շտկելու համար:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթ նշված ժամկետում չի

ներկայացվել, իսկ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամկետում ուղարկվել է անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթը, որը ուսումնասիրվել է գնահատող հանձնաժողովի նիստին ներկա մասնակիցների կողմից: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից այդ անհամապատասխանությունները շտկվել են:

9. www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.07.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն, որի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող: Միաժամանակ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի 28.07.2020թ. ներկայացված բողոքը, ԳԲՔԱ-ՆԳ-2020/65 բողոքի շրջանակներում Արգավանդի համայնքապետարանի կողմից ներկայացված «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ **գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:**

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ***<u>ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:</u>***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***<u>իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.</u>***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. ***<u>պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ</u>***, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ</u>***, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:</u>***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***<u>հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

<u>Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանվել է ծավալաթերթ-նախահաշիվը</u>:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.3-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով*** և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը,

որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվել է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ***, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից:

Այսպես՝ Արգավանդի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի համայնքի արևային կայանի տեղադրման և փողոցների լուսավորության անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որը խմբավորված է «1» չափաբաժնում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում բացակայում է հայտերի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը:

Նույն արձանագրության 5.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4-րդ կետում սահմանված թերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված

մասնակից ճանաչել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, այնուհեև 4.2 կետի համաձայն՝ որոշվել է հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը, իսկ 4.3 կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 5 աշխատանքային օր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ուղարկված էլեկտրոնային նամակը հանձնաժողովը անցկացրեց արտահերթ նիստ, որի ժամանակ ուսումնասիրվեցին «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված ծավալաթերթերը, որոնց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ երկու կազմակերպության ծավալաթերթերի ընդհանուր արժեքները համապատասխանում են իրենց ներկայացված գնային առաջարկներին, սակայն ծավալաթերթերում առկա են թվաբանական տեխնիկական սխալներ՝ կապված բազմապատկման հետ: Միաժամանակ արձանագրվել է, որ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից նշված «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի ծավալաթերթում գնային առաջարկի շեղումներ չի հայտնաբերվել:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին տրամադրել մեկ աշխատանքային օր ժամանակ՝ այդ տեխնիկական անհամապատասխանությունները շտկելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթ նշված ժամկետում չի ներկայացվել, իսկ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամկետում ուղարկվել է անհամապատասխանությունները շտկված ծավալաթերթը, որը ուսումնասիրվել է գնահատող հանձնաժողովի նիստին ներկա մասնակիցների կողմից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից այդ անհամապատասխանությունները շտկվել են:

Տեղեկագրում 24.07.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն, որի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող: Միաժամանակ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվները, արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում բացակայում է հայտերի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը, որը հիմք ընդունելով ծանուցել է վերջիններիս՝ տրամադրելով մեկ աշխատանքային օր շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և ընտրված մասնակից է ճանաչել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին, որից հետո, հիմք ընդունելով «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի 21.07.2020թ. գրությունը՝ առ այն, որ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի ծավալաթերթում առկա են որոշ անհամապատասխանություններ, հանձնաժողովը անցկացրել է արտահերթ նիստ, որի ժամանակ, ուսումնասիրելով «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթերը, արձանագրել է, որ երկու կազմակերպության ծավալաթերթերի ընդհանուր արժեքները համապատասխանում են իրենց ներկայացված գնային առաջարկներին, սակայն

ծավալաթերթերում առկա են թվաբանական տեխնիկական սխալներ՝ կապված բազմապատկման հետ: Գնահատող հանձնաժողովը, կրկին կիրառելով Կարգի 41-րդ կետը, «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին տրամադրել է մեկ աշխատանքային օր ժամանակ՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար:

Իսկ արդեն պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող: Միաժամանակ «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին ճանաչելով ընտրված մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվել է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված***

անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Մինչդեռ, ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը, գտնում եմ, որ վերջինիս կողմից թույլ է տրվել Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 41-րդ և 42-րդ կետերով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտումներ, քանի որ գնահատող հանձնաժողովը, հայտերի բացման և գնահատման փուլում 17.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրելով «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի և «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում անհամապատասխանություն՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, այն է՝ վերջիններիս հայտում բացակայում է հայտերի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը, արդեն իսկ նույն արձանագրությամբ կիրառել էր Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը և տվել էր վերջիններիս շտկման հնարավորություն, հետևաբար գնահատող հանձնաժողովը 20.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ արձանագրելով, որ երկու ընկերությունների ծավալաթերթերում առկա են թվաբանական տեխնիկական սխալներ՝ կապված բազմապատկման հետ կրկին իրավասու չէր կիրառել Կարգի 41-րդ կետը, պետք է կիրառեր Կարգի 42-րդ կետը և մերժեր վերջիններիս հայտը, մինչդեռ գնահատող հանձնաժողովը, խախտելով Կարգի 42-րդ կետը, կրկին կիրառել էր Կարգի 41-րդ կետը՝ երկրորդ անգամ շտկում պահանջելով՝ ընկերությունների կողմից արդեն իսկ շտկման արդյունքում ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվներում արձանագրված անհամապատասխանությունների մասով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.3-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Միաժամանակ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից սույն գործի շրջանակներում տրամադրված «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի կողմից 17.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանության շտկման արդյունքում

առաջին անգամ ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը, արձանագրում եմ, որ ծավալաթերթ-նախահաշվում նշված ընդհանուր արժեքը՝ 22 210 140 ՀՀ դրամը, համապատասխանում է վերջինիս կողմից Հավելված 2-ով՝ գնային առաջարկով, ներկայացված ընդհանուր գնին՝ 22 210 140 ՀՀ դրամին, սակայն ծավալաթերթ-նախահաշվի որոշ տողերում առկա են թվաբանական անճշտություններ, որի արդյունքում փաստացի ընդհանուր արժեքը, Ընկերության կողմից ծավալաթերթ-նախահաշվով աշխատանքների իրականացման համար առաջարկված միավորի գները հիմք ընդունելով, ստացվում է 22 257 628 ՀՀ դրամ՝ առաջացնելով գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գնի նկատմամբ շուրջ 47488 ՀՀ դրամի անհամապատասխանություն, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը պետք է կիրառեր Կարգի 42-րդ կետի կարգավորումը և մերժեր վերջինիս հայտը, այլ ոչ թե՝ կրկին տար շտկման հնարավորություն, այնուհետև վերջինիս ճանաչեր ընտրված մասնակից:

Այսպիսով՝ նման խախտումներով իրականացված գործողությունների արդյունքում գտնում եմ, որ պետք է դադարեցնել «Սմարթ Էներջի ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Անդրադառնալով «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից բողոքով, ինչպես նաև ԳԲՔԱ-ՆԳ-2020/65 բողոքով հրավիրված նիստի ընթացքում հայտնած այն պնդմանը, որ *«ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ծավալաթերթում առկա չի եղել թվաբանական սխալ (եղել է կլորացում տասնորդական թվում), և այդ պատճառով գնահատող հանձնաժողովը սկզբից արձանագրելով, որ ՍՊԸ-ն անհամապատասխանությունները նշված ժամկետում չի ներկայացրել, այնուհետև առանց այդ որոշման դադարեցման, պայմանագիր կնքելու մասին որոշման մեջ նշել է, որ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի պահանջներին: Վերոհիշյալի արդյունքում խախտվել է ընթացակարգի ողջ տրամաբանությունը, ողջ բնականոն ընթացքը*, ապա սույն մասով արձանագրում եմ, որ վերոնշվածով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել է նաև «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը և արձանագրվել, որ վերջինիս ծավալաթերթ-նախահաշվի

ընդհանուր արժեքը՝ 21 985 000 ՀՀ դրամը, համապատասխանում է վերջինիս կողմից Հավելված 2-ով՝ գնային առաջարկով, ներկայացված ընդհանուր գնին՝ 21 985 000 ՀՀ դրամին, սակայն ծավալաթերթ-նախահաշվի որոշ տողերում առկա են թվաբանական անճշտություններ, որի արդյունքում փաստացի ընդհանուր արժեքը, «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ծավալաթերթ-նախահաշվով աշխատանքների իրականացման համար առաջարկված միավորի գները հիմք ընդունելով, ստացվում է 21 978 700 ՀՀ դրամ՝ առաջացնելով գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գնի նկատմամբ շուրջ 6300 ՀՀ դրամի անհամապատասխանություն, որոնք բնավ չեն եղել տասնորդական թվի կլորացման արդյունք, ինչպես Ընկերությունն է պնդում:

Հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 24.07.2020թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության համաձայն՝ «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատելով հրավերի պահանջներին համապատասխանող, գործել է ոչ իրավաչափ:

Միաժամանակ ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի վարույթում եղել են գործեր, որոնցով տասնորդական թվերի կլորացումը դիտվել է պատշաճ, ապա սույն մասով արձանագրում եմ, որ առաջին հերթին տվյալ գործերը վերաբերվել են ոչ թե ծավալաթերթ-նախահաշվին, ինչպես պնդում է Ընկերությունը, այլ՝ գնային առաջարկին, իսկ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարգավորումը վերաբերում է միայն գնային առաջարկին, և երկրորդն, ինչն ամենակարևորն է, ընդհանրապես գնումների ՀՀ օրենսդրությամբ կարգավորվում է ոչ թե ՀՀ դրամի կլորացումները, այլ տասնորդականով ստացվող լումաների կլորացումները:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստը, որ ԳԲՔԱ-ՆԳ-2020/65 բողոքի շրջանակներում բողոքաբերի կողմից բողոքով բարձրաձայնվել է նաև «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի իրավաչափության հարցը, հետևաբար Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անդրադարձ է կատարել նաև վերջինիս հայտին՝ հաշվի առնելով նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, որոնք գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից են:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է սույն որոշման հիմանվորման շրջանակներում պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նույն հիմքով մերժելու «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը ևս:

Վերը նշված հիմքերով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարել, այն է՝ պարտավորեցնել «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «ՍՄԱՐԹ ԷՆԵՐՋԻ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,
- ընդունել որոշում «ՍՄԱՐԹ ԷՆԵՐՋԻ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

2. Սույն որոշման հիմնավորման շրջանակներում պարտավորեցնել «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**